ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2019 թվականի թիվ 100 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 107-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 107-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 666771.7 հազար դրամ գումարից՝ 25835,196 հազար դրամը փոխանցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 10596,071 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ 2019թ. հունիս ամսվա ընթացքում սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-

բաժանորդների կողմից սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Գևորգյանին՝ ապահովել որոշման կատարումը:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

23.07.2019

X

23 հուլիսի 2019թ.
ք. Իջևան